

ՄԱՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և աւան օրերէն)
Խմբագրութիւնը ընդունելու է աւան լիզուով.
Խմբագրութիւնները համար վճարում են
իրաւանիւր բառին 3 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԻՍԱԳՈՒԹԻՒՆ

Մեր ամենամեծ կարիքներից մէկը.— Ներ-
քիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Վարդա-
րացիացի. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅԱՍՏԱՆԻ
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՆ. Էլի մի նոր գիրք:

ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Շատ նշաններ ցոյց են տալիս, որ մենք
մտնում ենք մեր առօրեայ պահանջարկին-
ները գործնականապէս վերացնելու շրջա-
նի մէջ: Թէեւ դեռ շատ թոյլ, համարեա
աննշարեւելի են այդ նշանները, թէեւ մենք
մեծ մասամբ դեռ մտադրութիւններով,
բարի ցանկութիւններով սահմաններից չենք
դուրս եկել, բայց ուրանալ չէ կարելի, որ
այս ու այն կողմերում սկսում են կամաց-
կամաց հասկանալ հասարակական պար-
տաւորութիւնները: Մամուլի սրբազան
պարտքն է վերին աստիճանի ուշադրու-
թեամբ վերաբերել այդ տրամադրու-
թեան, խրախուսել համակրելի փորձերը,
որքան էլ փոքրիկ ու թոյլ լինեն նրանք,
զարթեցնել աւելի մեծ սէր դէպի օգտա-
կար ձեռնարկութիւնները, որոնք կարող
են իրականանալ հասարակական միահա-
մուռ գործակցութեամբ, ստեղծել աւելի
լայն գիտակցութիւն հարցերի վերաբեր-
մամբ: Աստի այս անգամ մենք կանգ
կանգնենք մի օրինակի վրա, որ ցոյց է տա-
լիս թէ ինչպէս կարելի է վերացնել մեր
կեանքի ամենամեծ պակասութիւններից
մէկը:

Մշակիլ երէկվայ համարում մեր աշ-
խատակից Լեւոն Սարգսեան նկարագրում
էր գիւղական կեանքի թշուառութիւն-
ները, որոնց մէջ ամենազրկաւորը այն է,
որ ամեն մի հիւանդութեան դէպքում
գիւղական մարդու միակ յոյսն ու ապա-
ւենքը պառաւ տատի իմացած միջոցներն
ու հմայքներն են: Այդ զարհուրելի դրու-

թիւնը մեր գաւառի ամենահիւանդոտ
կողմերից մէկն է: Նա շատ անգամ է
նկարագրված, շատ անգամ են ցոյց տուել
թէ ինչ են գիւղական «հէքիմները» և
մեր ժողովուրդը որքան մեծ զոհեր է տա-
լիս այն պատճառով, որ կատարելապէս
զուրկ է կանոնաւոր բժշկական օգնութիւ-
նից: Նման մէկին աջողկէր վիճակագրա-
կան տեղեկութիւնները հաւաքել, մենք կը
տեսնէինք ցոյցող թւանշաններ, որոնք կը
պատմէին մեզ, թէ որքան անմեղ զոհեր
են գնացել այս աշխարհից, որքան տներ
են քանդուել, որքան օջախներ են մարել
շնորհիւ այն թանձր տգիտութեան, որի
մէջ ընկղմված են թէ գիւղական հիւանդ-
ները, և թէ նրանց բժշկող մուլն անձ-
նաւորութիւնները:

Այս հին ցաւի դէմ կռուելու համար
մենք մինչև այժմ մի միջոց գիտէինք. քա-
րողում էինք մեր բժիշկներին յանուն ի-
րեւելի, յանուն մարդասիրութեան գնալ
գիւղերը, աշխատել խաւարից տառապող
մարդկութեան մէջ: Բայց մեր ինտելիգեն-
ցիան այնքան միամիտ չէ, որ իրեւել ա-
ված վերացական բանը փոխէ կենսական
իմաստութեան հետ, շոշափելի օգուտը
թողնէ ինչ-որ անմարմին հասկացողու-
թիւնների ետեւից գնալու համար: Սե տա-
րիները ընթացքում մենք բարոգում էինք,
իսկ մեզ պատասխանում էին մի արհա-
մարհալից լուռութեամբ: Գաւառներում
մարդու կենսաբան մի որ և է վայրենի սափ-
րիչի կամքին յանձնված մնաց, իսկ բժիշկ-
ները վազում էին քաղաքները, այնտեղ
էին ուզում հաստատուել, չը նայած որ
շատ տեղերում մրցութիւնը այնքան մեծ
է, որ նրանցից շատերը անյայտութեան
են մատուցում և հազիւ կարողանում են
ապրուստ գտնել:

Ի՞նչ կարելի է անել: Հարցը գործնա-
կանապէս վճռեց ինքը, գաւառը: Չը հա-
ւատալով որ իրեւելականութիւնը երբ և ից-
այնքան կը զարգանայ մեր ինտելիգենցիա-

յի մէջ, որ նրա անդամներից մէկն ու մէկը
յոժար կամքով անցնէ գիւղական աշխար-
հը և ժողովուրդին ծառայելու զուգահեռ-
ութիւնը ցոյց տայ, մեր գաւառները մտա-
ծեցին հրաւիրել բժիշկներ՝ ռոմիկով ծա-
ռայելու պայմանով: Մեր խոշոր գիւղերից
Ագուլիսը և Եուլաւէրը արդէն իրագոր-
ծել են այդ բանը. հասարակութիւնը փող
է վճարում և պահում է իր մէջ բժիշկ
հիւանդներին այցելելու համար: Իս, ի
հարկէ, դիւրմայի ամենազեղեցիկ լուծման
միջոցն է. և, ինչպէս տեսնում ենք Վա-
ղարշապատի այսօրվայ թղթակցութիւնից,
նոյն միտքը հասունացել է և այդ մեծ
գիւղում. այս անգամ նշանաւոր է այն
հիւանդանոցը, որ Վաղարշապատ մենակ
չէ մտածում իր փրկութեան համար, այլ
միացել է հարեան երկու գիւղական հա-
սարակութիւնների հետ:

Մեր խօսքը, ի հարկէ, այն ճիւղ բժշ-
կութեան մասին չէ, որ գնալան հնարե-
ներով փաթածեցին վաղարշապատցիների
և նրանց հարեանների վրէժ: Իս մասնա-
ւոր երեւոյթ է, որ չէ կարող կրկնել ա-
մեն տեղ: Մեզ համար կարեւոր է հա-
մարկել այն պատրաստակներին, որ հա-
մարկել են տալիս գիւղական հասարակու-
թիւնները իրանց կամաւոր տուրքերով
մշտական բժիշկ պահելու մասին: Ահա
հէնց այդ պատրաստակներին ենք
ուզում յանձնարարել մեր գիւղական հա-
սարակութիւններին: Մեր երկրում շատ
կան մեծ գիւղեր, որոնք զուրկ չեն փոքր
ի շատէ հասկացող մարդկանցից: Թող նը-
րանք միանան իրանց հարեան փոքր հա-
սարակութիւններին հետ և բժիշկներ հրա-
ւիրեն իրանց համար: Ժողովրդական ա-
ռողջութեան հարցը ամենազրկաւոր կեն-
սական հարցն է. առանց առողջութեան
չը կայ և չէ կարող լինել որեւէ բարեալ-
տութիւն աշխարհի վրա: Թող մեր գիւղա-
կան աշխարհը բաւական համարէ այնքան
զոհերը, որ տուել է մինչև այժմ իր տը-

գիտութեան և խեղճութեան պատճառով:
Ինչպէս տեսնում էք, հին ցաւը միանգա-
մայն անբուժելի չէ. գաւառական աշխար-
հը իր ծայրայեղ անօգնականութեան մէջ
կարող է փրկութիւն գտնել միահամուռ
գործունէութեամբ. հասարակական ինքն-
օգնութեան գաղափարը հրաշքեր գործե-
լու ընդունակութիւնն ունի: Նման այդ
գաղափարը հասունանայ մեր մէջ, գիւղա-
կան գոնէ խոշոր կենտրոնները կունենան
կանոնաւոր բժշկական օգնութիւն: Իսկ
դա մեծ առաջադիմութիւն կը լինի ժա-
մանակակից անմիջիկապ դրութեան հա-
մեմատութեամբ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ոսկի հորթին երկրպագող հասարակութիւն-
ները, ինչպէս յայտնի է, մի առանձին եռան-
դով են նուիրագործում այնպիսի ճիշտագոյն հաս-
կացողութիւններ բարոյականութեան, արդարու-
թեան մասին, որից ամեն մի փոքր ի շատէ
չը փաշտած մարդը, ինչպէս ասում են, կը փը-
շաքաղվի: Ահա մի քանի հիմունքներ այդ հասկա-
ցողութիւններից: Ի՞նչ է գոյութիւնը.— Անպայ-
ման վատ, դատապարտելի մի բան, երբ նրան
կատարում է աղքատը և, ընդհանրապէս, բա-
րեւիտ ժպտի արժանի մի «չարութիւն», երբ
նրա կատարողն է ոսկով լիքը գրգռանք ունե-
ցողը: Ի՞նչ է անգիտութիւնը.— Մեր օրվայ ճիշտ
կարօտ աղքատը, զարհուրելի կարօտութիւնից
ստիպված, ծեծում է իր երեխաներին, ուղար-
կում է նրանց մութարւո.— դա զաղանային ան-
գիտութիւն է և հասարակութեան ատամները
պիտի կրճատն այդպիսի գաղաւթի դէմ: Բայց
երբ մի միլիոնատիրը գործարանում, գրողանոց
ինստիտութեան պատճառով, պատահում է մի
աղէտ, որ սպանում և հաշմանդամ է դարձնում
մի բանի հատ բանուորներին, երբ այդ զոհերը
փողոց են դուրս չարքովում քաղաքը շան կեանք
վարելու համար.— դա անգիտութիւն չէ, հասա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԷԼԻ ՄԻ ՆՈՐ ԳԻՐԻՔ

Արեւելեան դժբաղդ հարցի ստեղծած ահագին
գրականութիւնը հարստացաւ մի նոր գրքով, որ
նոր լրիւ տեսակ Փրանսիայում և որի վերնա-
գիրն է. «La Question d'Orient depuis ses ori-
gines jusqu'au nos jours, par professeur Edou-
ard Driault, preface de M. Gabriel Monod,
Membre de l'Institut. Paris, 1899»:

Այն բազմիցս, երբ քաղաքական և դիպլոմա-
տիական աշխարհի կողմից արեւելեան հար-
ցի կատարեալ մոռացութեան է մատուցված,
յանկաբե՛ր մի այդպիսի բազմիցս, Փրանսիայի
Օրլէան քաղաքի լիցէի պատմութեան պրոֆէսոր
Գրիօլը հրատարակում է 407 էջերից բաղկա-
ցած մի ոտուար աշխատութիւն ամբողջովին
նուիրված արեւելեան հարցին: Այդ հեղինակու-
թիւնը, որին կցված է պ. Մոնոի նմադից ա-
ռաջաբանը, բոլորովին նոր տեսակետով է լու-
սաբանում չարաբաստիկ արեւելեան հարցը և,
համարձակ կարող ենք ասել, մինչև այժմ եւ-
րոպական գրականութեան մէջ երեւցած և ա-
րեւելեան հարցի մասին ճառող բոլոր պատմու-
թիւնների մէջ, պ. Գրիօլի պատմութիւնը ա-
մենաիրականաւորն է: Ընթերցողը կարող է հիմ-
նովին ծանօթանալ այդ ամբողջ հարցի հետ և
ամբողջական գաղափար կազմել, կարողով այդ
բարեխիղճ աշխատութիւնը: Հեղինակը ուսում-
նասիրել է արեւելեան հարցի ամբողջ ընդար-
ձակ գրականութիւնը և նրա ուսումնասիրու-
թիւնը նշանաւոր աղբիւրների ուսումնասիրու-
թեան արդիւնք է:

Մինչև այժմ արեւելեան հարցը ասելով հա-
կացվում էր օսմանեան պետութեան Եւրոպայի
քրիստոնեայ պետութիւնների հետ ունեցած յա-

րաբերութիւնների խնդիրը: Եւ այդպէս հա-
կացվում էր այն պատճառով, որ դիւանագի-
տական գրասեղանի վրա դրվում էին միայն
այսպիսի հարցեր.— դանիական երկրների, կամ
Յունաստանի անկախութիւնը, Ռուսաստանի և
Թուրքիայի կռիւը Սև ծովի տիրապետութեան
համար, Եգիպտոսի ինքնավարութիւնը, օսմա-
նեան կայսրութեան վարչական բարենորոգու-
թիւնները Եւրոպայի հակողութեան ներքոյ, քրիս-
տոնեայ պետութիւնների դիպլոմատիական յա-
րաբերութիւնները սուլթանի հետ, հայկական,
կրեթական, մակեդոնական գանգառները՝ գործ-
ված բռնաբարութիւնների և գաղաւթութիւնների
մասին: Գնելով հարցերը այդպէս ուրոյն ու-
րոյն, հասկանալի է, որ անկարելի է միանգա-
մից լուծել արեւելեան ընդհանուր հարցը, որով
հետեւ հաղիւ լուծվում է մի հարց, մի երկրորդն
իսկոյն նրա տեղին է դրաւում: Կարելի է առանց
տատանվելու ասել, որ վերոյիշեալ հարցերից
և ոչ մէկը դեռ ամբողջովին լուծված չէ, թող
թէ մի քանիսը նոյն իսկ ամենամիջոց լուծունի
չեն գտել:

Արեւմտե արեւելեան հարցը խօսքին պէտք է
մի աւելի լայն և ընդհանուր նշանակութիւն
տալ, որպէս զի կարելի լինի վերջնականապէս
լուծել նրան և որպէս զի նրա լուծմանը, լուծ-
վին և վերոյիշեալ բոլոր հարցերը, որոնք վրդ-
վում են աշխարհի խաղաղութիւնը և մինչև այ-
ժմ են սարսափելի արեւմտեւորութիւնների, սոս-
կալի ռեպրեզիտութիւնների առթիւ են դարձել:
Մինչև որ արեւելեան հարցը չը լուծվի ընդ-
հանուր առմամբ, չէ կարող լուծվել ոչ մակե-
դոնական, ոչ թուրքական ընթերցանի հարցը:
Եւ պ. Գրիօլը որոշում է արեւելեան հարցը
իր ընդհանուր և լայն նշանակութեամբ. նա
նկատում է այդ հարցը իբրեւ «խլամի» քրիստո-
նեայ աշխարհի հետ ունեցած յարաբերութիւնների
պատմութիւն, և այդ պատճառով վերոյիշեալ

բոլոր խնդիրներն: Եւ ընդունւ է այն յարաբերու-
թեան տեսակետից, որ այդ խնդիրները ունեցել
են իսլամի պատմութեան հետ: Ահա ինչպէս է ո-
րոշում պ. Մոնոն այդ տեսակետը:

«Վաղմութիւնը, VII դարից սկսած մինչև
XVII-ը, այն է մի հազարամեայ շրջանում, տա-
րածեց իր կրօնական և քաղաքական տիրապե-
տութիւնը արեւմտեան և հարաւային Ասիայի,
հիւսիսային Աֆրիկայի և հարաւային Եւրոպայի
վրա. միայն Սլաւոնի և Միջերկրականի մի
քանի կղզիներ կարողացան միջին դարում թո-
թափել նրա լուծը: Քրիստոնեայ Եւրոպայի
ջանքը՝ դիմադրելու իսլամի տարածման, այն է
նրա խաչակրական արշաւանքը ապարդիւն ե-
ղաւ և քրիստոնեայ պետութիւնները հասան այն
տեղ, որ սկսեցին թուրք պետութեան հետ նի-
զակցութիւն սահմանել: Սակայն XVII-րդ
դարից սկսած, օսմանեան պետութիւնը սկսում
է տկարանալ իր հզօրութեան յորդութեան և
նուաճված աղգերը ի մի ձուլելու անընդունա-
կութեան պատճառով. նա չը կարողացաւ կազ-
մել նրանցից մի ազգութիւն, ոչ ևս ձուլել թուր-
քերի հետ, որոնք մնում են իբրեւ մի օրբ, բա-
նակված թշնամու հողի վրա: Արեւելեան Եւրո-
պան իր գոյութիւնը վտանգի ենթարկված տես-
նելով, սկսեց սթափվել և յուսահատ եռանդով
դիմադրել մահմետական արշաւանքին: Ռուսաս-
տանը և Աւստրիան սկսեցին ոտնակոխ անել
անհաւատներին: Այդ մի նոր խաչակրական
արշաւանք էր, այս անգամ յաղթական, որ խա-
չը մղեց կիսալուսնի դէմ: Այդ խաչակրական
արշաւանքը պէտք է շարունակվի այսօրհետեւ
ևս, միայն ժամանակակից քաղաքակրթութեան
որոշած ձևով: Վատն այն է, որ ներկայումս
առեւտրական նկատումները խառնվում են քա-
ղաքական նկատումներին: Եւրոպական մեծ
պետութիւնների մրցութիւնները պատճառ են
դառնում, որ թուրքերը միշտ դաշնակիցներ և

քաղաքականներ են գտնում և այդպիսով ա-
զատվում են վերջնական կործանումից: Միւս
կողմից, օսմանեան հողի վրա ընդակող ջրիս-
տոնեանների փոխադարձ նախանձը և երկա-
ռակութիւնը ապահովում են թուրքերի տիրա-
պետութեան երկարատեւ գոյութիւնը: XVII և
XVIII դարերում, Փրանսիան դաշնակցութիւն
կնքեց Շվեդիայի, Լեհաստանի և Թուրքիայի հետ,
որպէս զի կանգնեցնէ Ռուսաստանի փառաւո-
րական ձգտումները: XIX դարում, Փրանսիան
և Անգլիան միաբանվեցին մի բանի անգամ օս-
մանեան կայսրութեան ամբողջութիւնը պահա-
նելու համար. 1878-ի թուրք-ռուսական պատե-
րազմից յետոյ, ամբողջ Եւրոպան միջամտեց
և խափանեց թուրքական իշխանութեան ջնջումն
Եւրոպայում, իսկ Հայաստանի կոտորածներից
և Կրեթէի ապստամբութիւնից յետոյ, մեծ պե-
տութիւնների կոնցերտը, Փրանսիայի առաջա-
րկութեամբ, առանց ձիւղաղելու, իր համար օրա-
կարգ սահմանեց օսմանեան կայսրութեան ան-
ձեռնմխելիութեան սկզբունքը, մինչդեռ Գեր-
մանիան, աւելի ցինիկ գտնվելով, արտայայտեց
կարմիր սուլթանի համար մի հրճուալից բարե-
կամութիւն:

«Չը նայելով սակայն, որ իսլամի անկումը
յետաճգվում է քրիստոնեայ աղգերի մրցութեան
և փառասիրութեան չնորհիւ, ոչ մի կասկած չը
կայ, որ նրա քաղաքական տիրապետութիւնը
չուտով պէտք է անհետանայ, թէև կրօնական
նոր նուաճումներ է անում Աֆրիկայում: Եւ
այդ պատճառով է, որ պ. Գրիօլը որոշում է
արեւելեան հարցը իր լուսմի քաղաքական
իշխանութեան կործանման խնդիրը՝
բաւերելով Նման այդ կործանումն ուշանում է
այժմ, դրա պատճառն այն է, որ օսմանեան
կայսրութեան բաժանման եղանակի մասին չեն
կարողանում համաձայնութիւն կայացնել և չեն
կամենում, որ արեւելեան հարցը աւելի սուր

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.